«ԱԼՖԱՍԵՔՅՈՒՐԻԹԻԶ»
Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության

2024թ. տարեկան ֆինանսական վերլուծություն

2024 թ. Ընկերության ռազմավարությունը նպատակաուղղված է եղել այնպիսի միջնաժամկետ նպատակների իրականացմանը, ինչպիսիք են Ընկերության ֆինանսական ցուցանիշների կայունության ապահովումը, ներդրումային շուկայում գործունեություն իրականացնող ընկերությունների շարքում մրցունակ լինելը, Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և Ն1 տնտեսական նորմատիվի ապահովումը, հաճախորդների կայուն սեգմենտի ապահովումը:

Ընկերության պորտֆելում առկա միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորը վերջին տարիների ընթացքում ունեցել է նվազման տենդենց՝ պայմանավորված մինչև 2023թ. հունիս ամիսը վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացմանը զուգահեռ ֆինանսական շուկայում գրանցված պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի բարձրացմամբ, ինչն ուղղակիորեն ազդել էր Ընկերության շահույթի վրա:

Հարկ է նշել, որ 2024թ. ընթացքում վերաֆինանսավորման տոկոսադրույքը բռնել էր աստիճանական նվազման ուղեգիծը՝ տարեսկզբի 8,25%-ից նվազելով մինչև 7%:

Ընկերությանը կանոնադրական կապիտալը 2024թ. ընթացքում մնացել է անփոփոխ և 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 350.0 մլն դրամ: Քանի որ Ընկերությունն ունեցել է վնաս, ապա հատկացում գլխավոր պահուստին չի կատարվել և այն մնացել է անփոփոխ՝ կազմելով 37.5 մլն դրամ:

Ինչ վերաբերում է տոկոսային ծախսերին, ապա Ընկերության տոկոսային ծախսերը 31.12.24թ. դրությամբ կազմել են 499 մլն դրամ:

2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր ակտիվները կազմել են 677 մլն. դրամ:

2024թ. թվականի գործունեության ընթացքում ընդհանուր կապիտալի, ընդհանուր պարտավորությունների և ընդհանուր ակտիվների տարրերի կառուցվածքային փոփոխություններ չեն կատարվել:

Իր գործունեությունն ապահովելու նպատակով Ընկերությունը օգտագործել է կանոնադրական կապիտալը և գործընկեր ՀՀ բանկերից ներգրավված փոխառու միջոցները:

Հարկ է նշել, որ որոշ բանկերի կողմից տրամադրվող ռեպո համաձայնագրերի ապահովման միջոց հանդիսացող պետական պարտատոմսերի գնահատման պայմանները տարվա ընթացքում ժամանակ առ ժամանակ վերանայվել են, ինչը պայմանավորված է բանկերի կողմից ստեղծված պայմաններում սեփական ռիսկերի կառավարման անհրաժեշտությամբ:

Ընկերության միակ բաժնետիրոջ և գնորդի միջև, Ընկերության վաճառքի նախնական գրավոր պայմանավորվածության հիմքում ընկած արժեթղթերի պորտֆելի վաճառքի պահանջի հիման վրա՝ Ընկերությունը 2024 թվականի հոկտեմբերի 17-ի դրությամբ վաճառել է իր արժեթղթերի պորտֆելը:

Ընկերության միակ մասնակիցը նախատեսել էր վաճառել Ընկերությունը և համապատասխան փաստաթղթերը ուղարկվել էին ԿԲ նախնական համաձայնությունը ստանալու նպատակով: Վերոնշյալ համաձայնությունը ԿԲ կողմից ստացվել է 2024 թվականի դեկտեմբերին:

Ընկերության եկամուտների կառուցվածքի մեջ զգալի մաս են կազմում ՀՀ պետական արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտները: 2024թ. հոկտեմբերի 16-ի դրությամբ Ընկերության պորտֆելի 69%-ը դասակարգվել է որպես ամորտիզացված արժեքով հաշվարկվող ակտիվներ, իսկ 31%-ը՝ այլ համապարփակ ֆինանասական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվներ:
2024 թվականի չորրորդ եռամսյակում Հայաստանում տնտեսական ակտիվությունը շարունակել է մոտենալ երկարաժամկետ կայուն աճի գնահատվող մակարդակին: Տնտեսական աճին մեծապես նպաստել է շինարարության, ծառայությունների և առևտրի ճյուղերի բարձր աճը: Այն շարունակել է կրել որոշ կարճաժամկետ գործոնների ազդեցությունը՝ պարունակելով էական անորոշություններ տնտեսական աճի կայունության, երկարաժամկետ հեռանկարի, ինչպես նաև ներքին պահանջարկի հետագա միտումների վերաբերյալ: Ծառայությունների նկատմամբ արտաքին պահանջարկը շարունակում է ճշգրտվել: Նման իրավիճակում աշխատաշուկայի պայմանները որոշակիորեն թուլացել են՝ արտահայտվելով աշխատավարձերի, կոշտ գներով բնութագրվող ծառայությունների գնաճի և գնաճային սպասումների որոշակի նվազմամբ: Այս զարգացումներին զուգահեռ, հարկաբյուջետային քաղաքականության կողմից պահանջարկի լրացուցիչ խթանման ռիսկերը պահպանվում են: Այսպիսով, 2024թ.-ի ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում Ընկերությունն արդյունավետ կերպով կատարել է իր առջև դրած նպատակները և պահպանել համեմատական կայունություն ժամանակաշրջանի համար:
Այսպիսով, հաշվետու տարվա ժամանակահատվածին բնորոշ հիմնարար ռիսկերի և անորոշությունների պայմաններում, հնարավոր ռիսկերի խելամիտ գնահատման արդյունքում Ընկերության միակ մասնակիցը որոշում է կայացրել Ընկերության վաճառքի վերաբերյալ:

Գործադիր տնօրեն Գ.Գրիգորյան